

**ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱԿՆԵՑՈՒ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵԻ ԱԲԵՏԱՐԱՆԻ»
ԵՐԿԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՄԱՍԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ***

ՀՏԴ 81՝ 37

DOI: 10.52063/25792652-2024.4.23-121

ՎԱՐԴՈՒՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության
ֆակուլտետի հայոց լեզվի պատմության և
ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
varduhi.barseghyan@ysu.am
ORCID: 0009-0009-4771-8486*

Հայերենի գրային շրջանների, լեզվի պատմության, լեզվական համակարգի, դրա զարգացումների և փոփոխությունների մասին լավագույն պատկերացումները տալիս են գրավոր մատյաններն ու հիշատակարանները: 10-12-րդ դարերի լեզվական մակարդակի և համակարգի, գրաբարի զարգացման և կիրառելիության պատկերը կարելի է ցույց տալ այդ ժամանակաշրջանի մի շարք նշանավոր դեմքերի աշխատություններով: Ցայսօր գրեթե ուսումնասիրված չէ մեկնողական բնույթի երկերի լեզուն, որը կարող է հարուստ տեղեկություններ հաղորդել գրաբար ուսումնասիրողներին: Բացի այդ՝ մեկնողական երկերի հետազոտության շնորհիվ կբացահայտվեն հայ դավանաբանական մտքի և դրա լեզվի առանձնահատկությունները:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հայ միջնադարյան շրջանի ականավոր դեմքերից մեկի՝ Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» գրաբար երկի նորակազմ կամ նորաբան բառերը՝ բացահայտելով այդ միավորների հետագա իմաստային զարգացումը արդի արևելահայերենում: Հոդվածը գրելիս կիրառել ենք զուգադրահամեմատական, տարածամանակավորման, վերականգնման, մասամբ նաև վիճակագրական նկարագրության մեթոդները՝ փորձելով տալ երկում առկա նորակազմությունների իմաստային բացատրությունները, ինչպես նաև այդ բառերի խոսքիմասային առանձնահատկությունները: Հոդվածի հատկանշական արդյունքն այն է, որ մասնակիորեն ներկայացվում է 11-րդ դարի նշանավոր դեմքերից մեկի՝ Անանիա Սանահնեցու մեկնության բառապաշարի միջոցով տվյալ ժամանակի գրաբարի զարգացման բարձր աստիճանն ու լեզվաոճական ճոխությունը:

Հիմնաբառեր՝ Անանիա Սանահնեցի, բառային նորակազմություն, իմաստային նորակազմություն, գրաբար, արդի հայերենի բառապաշար:

Ներածություն

Հայ միջնադարյան շրջանի մատենագիր, մեկնիչ Անանիա Սանահնեցին Սանահնի դպրոցի նշանավոր դեմքերից է: Թեև մատենագրական տվյալները բավական սուղ են, սակայն հայտնի է, որ պատմագիրն ապրել և ստեղծագործել է 11-րդ դարում, հեղինակել դավանաբանական, մեկնաբանական, տոմարագիտական,

** Հոդվածը ներկայացվել է 11.11.2024թ., գրախոսվել՝ 28.11.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:*

ճառագրական և ներբողական երկեր: Դատելով Սանահնեցու թողած գրերի, դավանաբանական և մեկնողական ժառանգությունից և իր վկայությունից՝ նա ապրել է բավական երկար և հարուստ կյանք: Որպես իր ժամանակի գիտնական, հոգևորական գործիչ՝ Սանահնեցին արտահայտում է կրթական, մանկավարժական, դաստիարակչական ու դավանաբանական կարևոր գաղափարներ, որոնք նպաստել են իր սաների մեջ հայրենասիրության, բարեվարքության և մարդասիրության արժեքների ամրակայմանն ու տարածմանը:

Անանիա Սանահնեցին մեկնողական մի քանի աշխատության հեղինակ է: Մեկնողական աշխատությունների շարքում իր ուրույն տեղն ունի «Մեկնութիւն Սատթէի Աւետարանի»՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, որ գրվել է հեղինակի ուսուցչի՝ մեծ հռետոր Դիոսկորոս Սանահնեցու (1039-1063) խնդրանքով: Աշխատությունը մեկ Ավետարանի հանգամանայից մեկնություններից է հայ մատենագրության մեջ, պետք է գրված լինի մոտ 1060-1063 թթ.:՝ ավելի ուշ խմբագրվելով և բարեփոխվելով փոխոսփա, գիտնական և մանկավարժ Հովհաննես Սարկավազի կողմից (Բարսեղյան 53):

Մեր խնդրո առարկան Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Սատթէի Աւետարանի» երկի հեղինակային նորակազմությունների քննությունն է: Նորակազմությունները կամ նորաբանությունները բառապաշարի այն միավորներն են, որոնք ստեղծվում են որևէ հեղինակի կամ թարգմանչի կողմից՝ արտահայտելու համար նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ, եզրույթներ, կամ հին, արդեն ծանոթ երևույթները նոր իմաստներով բնութագրելու համար: Նոր բառերը ստեղծվում են լեզվում արդեն գործող արմատների, ածանցների տարբեր զուգակցումներով կամ դրանց վերաիմաստավորմամբ: Այսպիսի բառերը ժամանակի ընթացքում կամ համընդհանուր գործածություն են ձեռք բերում՝ անցնելով գրական լեզվի բառապաշար, կամ մնում են իբրև նորագյուտ դիպվածային միավորներ՝ վկայված միայն առանձին հեղինակի կամ ստեղծագործության լեզվում՝ չստանալով լայն և տարածված կիրառում:

Քրիստոնեության մեջ մեծ կարևորություն ունեցող «Մեկնութիւն Սատթէի Աւետարանի» երկի ուսումնասիրության ընթացքում դուրս ենք բերել 32 բառային միավոր, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում՝ Մխիթարյան հայրեր Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմեյանի և Ս. Ավգերյանի «Նոր բառգիրք Հայկագեան լեզուի»-ում (այսուհետև՝ ՆՅԲ) և Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. ՆՅԲ-ում չվկայված բառեր» աշխատանքում, ինչպես նաև առանձնացրել ենք 26 բառ, որոնք վկայված են վերոհիշյալ բառարաններում միայն Անանիա Սանահնեցի նշումով:

«Մեկնութիւն Սատթէի Աւետարանի» երկի նորակազմությունները

Ինչպես նշեցինք վերը, նորահայտ բառերն ուսումնասիրելիս փորձել ենք բացահայտել դրանց իմաստային երանգներն ու բովանդակությունը, ինչպես նաև այդ նորաբանությունները վերլուծել ենք ըստ խոսքիմասային պատկանելության: Նորակազմությունները բաժանել ենք երկու խմբի. ա) նորահայտ բառեր, որոնք վկայված չեն ո՛չ ՆՅԲ-ում, ո՛չ Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. ՆՅԲ-ում չվկայված բառեր» բառարանում, բ) նորակազմ բառեր, որոնք վկայված են վերոնշյալ բառարաններում, բայց դրանց համար որպես աղբյուր է ծառայել միայն Սանահնեցու «Մեկնութիւն Սատթէի Աւետարանի» երկը: Քննության տեսանկյունից ուշագրավ են նաև այն բառերը, որոնք թեև նոր չեն, կան ՆՅԲ-ում կամ Լ. Հովհաննիսյանի բառարանում, սակայն «Մեկնութիւն Սատթէի Աւետարանի» երկում կիրառվել են նոր նշանակություններով: Սրանք այն բառերն են, որոնք հայերենում ունեցած հիմնական իմաստից բացի

կիրառվել են նոր բովանդակությամբ. հեղինակը դրանց հաղորդել է այլ նշանակություն, այսինքն՝ Սանահնեցին գրաբարյան բառերի իմաստային դաշտը հարստացրել է նոր նշանակություններով: Այս տիպի բառերից առանձնացնենք **խոնաւ**-ը, որը ՆՋԲ-ում բացատրվում է որպես «ջրի, հիւթաւոր, գէճ, դալար»: Սակայն այս բառը Սանահնեցու երկում օգտագործվում է «վավաշոտ, անբարոյական» իմաստով՝ ստանալով փոխաբերական իմաստ՝ ««Տէր նստեալ ի թեթել ամպ» անջրդի ի գիրկս Կուսին, որ է մաքուր յամենայն խոնաւ ցանկութեանց...»: Հետաքրքրական է, որ արդի արևելահայերենին ևս չի փոխանցվել Սանահնեցու՝ այս բառին հաղորդած նշանակությունը: Եդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ունենք վեց նշանակությունը, որոնցից չորսը, ըստ էության, կապված են «տամուկ» իմաստի հետ: Փոխաբերական իմաստով այս բառը ստացել է «մեղմ, բարի» իմաստները (Աղայան 593):

Մեր կազմած բառացանկում հատկանշական են այն նորակազմությունները, որոնք գրաբարի բառարաններում առկա են, բայց տրված են միայն Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկի նշումով: Զննենք այդ բառերը, որոնց զգալի մասը ածականներ են և գոյականներ:

Գոյական՝

1. **խորխուզողութիւն** բառը նշանակում է «խոր քնություն»: Բարդաձանցավոր, վերացական գոյական է՝ «խոր» ածական+«խուզ/խոյզ» հնչյունափոխ բայարմատ և -ութիւն գոյականակերտ ածանց: Մեկնության մեջ ունի հետևյալ կիրառությունը՝ «Խոհեմաբար և խորխուզողութեամբ որ ... հայրապետաց բանն ի բարձանց»:
2. **Առագաստատուն**՝ հարսնասենյակ՝ «սուրբ սենեակ եւ առագաստատուն»: Բառը կազմությամբ բարդաձանցավոր է՝ առ+ագ+աստ+ա+տուն: Թեև արդի արևելահայերենում բառը չի կիրառվում, այնուամենայնիվ իմաստն արտահայտվում է տարածում գտած «առագաստասենյակ» բառով:
3. **Շաղապատութիւն**՝ միացած՝ միավորված լինելը: Բազմաձանց բառ է՝ հողակապով, հունաբան նախաձանցով և բնիկ վերջաձանցով՝ շաղ+ա+պատ+ութիւն: Ստ. Մալխասյանցի բառարանում առկա է «շաղապատ» ածականը, որն ունի «փաթաթված, գալարուն» իմաստները: Ըստ այդմ՝ արդի արևելահայերենում ունենք նաև «շաղապատել» բայը՝ «փաթաթել, ոլորել, հյուսել» իմաստներով (Մալխասյանց 495, 496):
4. **Քաղցրապատում** բառն ունի «հաճելի, բարի պատմություն» կամ «հաճելի պատմող» իմաստները: Կազմությամբ բարդ բառ է՝ քաղցր+ա+պատում: Եդ. Աղայանի բառարանում բառը վկայված չէ:
5. **Աղետակցութիւն** բառն ունի «ցավին մասնակից լինելը, ցավակցություն» իմաստները՝ «Չբուժականն մերձեցուցանել զդեղն աղետակցութեամբ»: Կազմությամբ բարդաձանցավոր բառ է՝ աղետ+ա+կց/կից+ութիւն: Թեև Եդ. Աղայանի և Ստ. Մալխասյանցի բառարաններում այս բառը վկայված չէ, այնուամենայնիվ իմաստն ու կազմությունը ըմբռնելի են նաև արդի արևելահայերենի օրինաչափություններով:
6. **Վայրացատումն**՝ վայրագ ցատում: Կազմությամբ բարդաձանցավոր բառ է՝ վայր+ա+ցատ+ումն:

Ածական՝

1. **Եռանդնայորդոր** բառն ունի «մեծաեռանդ, մեծ եռանդով» իմաստ: Արդի հայերենում բառը պահպանվել է: Ստ. Մալխասյանցի բառարանում տրված են «եռանդից հորդորված՝ շարժած՝ ոգևորված» իմաստները (Մալխասյանց, 566): Կազմութամբ բարդածանցավոր է՝ եռ+անդ+ուն+ա+յորդ+որ:
2. **Որոնաջան՝** ջանասիրությամբ որոնող կամ որոնելով: Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» բառի նշված ձևն այլևս չկա, ունենք «որոն» գոյականը՝ հետևյալ երկու նշանակություններով. 1. «որոնելը, որոնումն», 2. «հոգ ու խնամք տանել, տիրություն անել» (Մալխասյանց 586): Բարդ բառ է՝ որոն+ա+ջան:
3. **Սուտասահ** բառն ունի «աննպատակ գնացող» իմաստը՝ «ի բլուրս մեր մասին բանականաց ոտ (...) դեգերիւր սուտասահիցս...»: Բարդ բառ է՝ սուտ+ա+սահ:
4. **Յազնահոծեալ** բառը նշանակում է «անհնազանդ»: Բարդածանցավոր է՝ յազն+ա+հոծ+եալ:
5. **Սովազին** բառը ունի «սովալլուկ, սաստիկ սոված» իմաստը, իսկ կազմությամբ ածանցավոր բառ է՝ սով+ա+զին: Թեև այն չի գործածվում գրական հայերենում, այնուամենայնիվ Ստ. Մալխասյանցի բառարանում հանդիպում է «սովազնել» բայը՝ «սովից չարչարվել, սովել» իմաստով (Մալխասյանց 241):
6. **Քառասեր** բառը նշանակել է «չորսից սերված» կամ «չորս զավակ ունեցող», կազմությամբ բարդ բառ է՝ քառ+ա+սեր:
7. **Մեծատես՝** «լավ տեսանելի» կամ «տեսքը մեծ»՝ «մեծատես տառիդ դորին գրաւդի»: Արդի արևելահայերենում ունենք «մեծատեսիլ» ածականը, որը ևս նշանակում է «մեծ տեսք ունեցող, ընդարձակ կամ գեղեցիկ տեսքով»: Կազմությունը՝ մեծ+ա+տես՝ բարդ բառ:
8. **Կարկառակն՝** աչքերը վեր հառած, աչքը տնկած՝ կար+կառ+ակն՝ բարդ բառ՝ բայական արմատով: Արդի արևելահայերենում գործածական է «կարկառել» բայը:
9. **Հողագուն՝** հողածին, մարդ՝ հող+ագուն՝ բարդ բառ:
10. **Տառադրոշմ՝** տառերով դրոշմված՝ տառ+ա+դրոշմ՝ բարդ բառ:
11. **Աստուածաբունն՝** աստվածային զորություն ունեցող՝ աստուած+ա+բունն՝ բարդ բառ,
12. **Սնաս** նշանակում է չասված, նախածանցավոր է՝ ան+աս: Էդ. Աղայանի բառարանում բառը հոմանիշ է «անասելի» բառին՝ հետևյալ երեք նշանակություններով. 1. «որ չի կարելի ասել, աննկարագրելի», 2. «անպատշաճ, ասելու համար անվայել», 3. «չափազանց, ծայրահեղ» (Աղայան 47):
13. **Պասքաքսելի՝** սաստիկ ծարաված՝ պաս+ք+ա+քս+ելի՝ բարդածանցավոր բառ: Ստ. Մալխասյանցի բառարանում հանդիպում է «պասքել» բայը՝ հետևյալ իմաստներով՝ 1. «սաստիկ ծարավ զգալ, պապակել», 2. «երաշտից ցամաքել, չորանալ», 3. «տենչալ, կարոտ զգալ»: Բառարանում հանդիպում են նաև «պասքատողոր», «պասքուտ» ածականները, «պասքունն» գոյականը (Մալխասյանց 56):

14. **Վերնակերպեալ՝** հրեշտակային կերպարանք ստացած՝ վեր+ին+ա+կերպ+եալ՝ բարդածանցավոր բառ:
15. **Գերակիր՝** գերակա, գերագույն՝ գեր+ա+կիր՝ ինքնատիպ կաղապար՝ հունական նախածանցից և բնիկ բայարմատից:
16. **Բժշկակերտ** բառը նշանակում է բժշկություն կերտող, բժշկող՝ բժիշկ+ա+կերտ՝ բարդ բառ
17. **Կորագործ՝** անհմուտ՝ կոր+ա+գործ՝ բարդ բառ:
18. **Ստառուադիր** բառը նշանակում է խելացի մտքեր արտահայտող: Կազմվածամբ բարդ բառ է՝ միտ+առ+ա+դիր:
19. **Ճշգրտաքատակ՝** գեր ճշգրիտ՝ ճիշտ+գիր+իտ+ա+քատակ՝ բարդածանցավոր բառ:
20. **Ավետաքարոզ՝** քարոզով ավետիս բերող՝ ավետ+ա+քարոզ՝ բարդ բառ:

Ներկայացնենք նաև այն նորակազմությունները, որոնք վերոնշյալ բառարաններում բացակայում են, և որոնց բացատրությունը փորձել ենք տալ մենք՝ ելնելով բնագրային օրինակների իմաստներից: Բացի նշյալ բառերի իմաստների բացահայտումից, դրանք ենթարկել ենք նաև բառակազմական վերլուծության՝ օգտվելով բառակազմական հիմնական օրինաչափություններից:

Գոյական՝

1. **ամենաչ** կարող է նշանակել բոլորի աչքերը ամեն+աչ՝ բարդ բառ,
2. **գաւտեկոռութիւն՝** գոտեպնդում՝ գոտի+ա+կուռ+ութիւն՝ բարդածանցավոր բառ,
3. **սանամուտ**՝ աշակերտի մուտքը՝ սան+ա+մուտ՝ բարդ բառ,
4. **գարդարութիւն՝** զարդարվածություն՝ զարդ+ար+ութիւն՝ ածանցավոր,
5. **անդրականութիւն՝** առաջնեկություն՝ ածանցավոր բառ՝ անդր+ական+ութիւն,
6. **մրտութիւն՝** մատնություն՝ մրտ+ութիւն՝ ածանցավոր՝ անստույգ արմատով,
7. **մեծագաւրութիւն՝** հզորություն՝ մեծ+ա+գաւր+ութիւն՝ բարդածանցավոր,
8. **ժողովետդ՝** ժողովատեղի՝ ժողով+տեղ (ետդ)՝ բարդ բառ,
9. **սգաւնութիւն՝** զգոնություն՝ սգաւն+ութիւն՝ ածանցավոր,
10. **աւգտութիւն՝** օգտակարություն՝ աւգտ+ութիւն՝ ածանցավոր,
11. **աւրինագիր՝** օրենսգիրք՝ աւրեն+ա+գիր՝ բարդ բառ:

Ածական՝

1. **պարտասեալ՝** պարտքից տանջված՝ պարտ+աս+եալ՝ բարդածանցավոր բառ,
2. **սրորբեաբնակ՝** հրեշտակաբնակ՝ սրորբե+բնակ՝ բարդ բառ,
3. **զուգածագգեստ՝** զարդարագգեստ՝ զուգ+ած+ա+գգ+եստ՝ բարդածանցավոր,

4. **անսկզբնաբալ**՝ անհագուրդ՝ ան+սկիզբ(և)+ա+բալ՝ բարդածանցավոր,
5. **աննայելի**՝ անտեսանելի՝ ան+նայիլ+ի՝ ածանցավոր,
6. **պարտաշնորհ**՝ ներող, զիջող՝ պարտ+ա+շնորհ՝ բարդ բառ,
7. **աջամետ**՝ աջակողմյան՝ աջ+ա+մետ՝ բարդ բառ,
8. **ամրուսում**՝ լավ կրթված՝ ամուր+ուս+ում՝ բարդածանցավոր,
9. **անփառունակից**՝ փառազուրկ՝ ան+փառ+ուն+ա+կից՝ բարդածանցավոր,
10. **անարու**՝ ոչ տղամարդկային՝ ան+ար+ու՝ ածանցավոր,
11. **դեմետրական**՝ երկրային՝ դեմետեր+ական՝ ածանցավոր,
12. **չարնախանձ**՝ նախանձասիրտ՝ չար+նախանձ՝ բարդ բառ,
13. **սզատես**՝ սզակիր՝ սուզ+ա+տես՝ բարդ բառ:

Երկի նորակազմություններն ուսումնասիրելիս հանդիպել էն նաև երկու դերբայներ, որոնց իմաստը ևս փորձել ենք բացահայտել՝ ելնելով երկի օրինակներից:

1. **զիլզբերեալ**՝ զույգ երեխա ծնած՝ զիլզ+բեր+եալ՝ բարդածանցավոր բառ,
2. **սզեցուցանող**՝ սուզ տարածող՝ սուզ+եաց+ուցան+ող՝ բարդածանցավոր բառ:

Ինչպես նկատելի է վերը թվարկված բառերի կազմություններից, նորաբանությունները հիմնականում ստեղծվել են հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան: Աչքի են ընկնում հատկապես *–ուլթիւն* և *–ական* վերջածանցներով ստեղծված գոյականներ և ածականներ: Բացի վերոնշյալ բառերից, որոնց իմաստները փորձել ենք բացահայտել և նմանօրինակ կազմություն ունեցող բառերի միջոցով վերականգնել, երկում առկա են նաև բառեր, որոնց իմաստը դեռևս անստույգ է: Դրա պատճառ կարող են լինել ձեռագրերի աղավաղումն ու արտագրողի անուշադրությունը: Թեև իմաստները պարզ չեն, սակայն հարկ ենք համարում դրանք եւս ներկայացնել՝

1. **ետազատակ**. կիրառվել է որոնաջան բառի հետ, կարող է նշանակել վերջում գատվող՝ ետ+ա+գատ+ակ,
2. **աներուելեաք** բառի իմաստը անստույգ է,
3. **ոծանել**, որ կարող է ունենալ ճանաչելու իմաստը՝ «Առ որ տեսութիւն մեծ տեսանալին տատանիւր,-ասե,-մարդ է, բայց ոծանիցե զնա, որում թէ նոյն իսկ վերնակերպեալ յաւետ յարժանն կոյս կեցեալ միաւորութեամբ»:
4. **ենաբեր**՝ «...ենաբերն բարի», գուցե պակասավոր բայն է՝ են հոգնակի երրորդ դեմքի ներկայի բայածել + բեր բայարմատ, օրինակ՝ «բեր»՝ «բերող»՝ աստվածային արարչությունը բերող՝ «Էաբերի» սկզբունքով, կամ կ-ն է ընկել՝ կենաբեր՝ կենսաբերի իմաստով:
5. **Ամաղէկ** բառի հետ կապված նշենք, որ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» (Հայր Մկրտիչ Աւգերեան եւ Հայր Գրիգոր Ճէլալեան, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1865, էջ 29) աշխատանքում ունենք *ամաղէկամարտ* բառը, որը բացատրված է «ամաղէկալ դեմ պատերազմ ընող (սուր)», իսկ Լավրենտի Յովհաննիսյանի բառարանում

(Գրաբարի բառարան-Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, էջ 26) սույն ամառեկամարտ-ը բացատրված է գրեթե նույն կերպ, բայց բերված է Ստեփանոս Սյունեցու բնագրային երկու հղումով, որից պարզ է դառնում, որ այն և՛ Մովսեսի ձեռքում հայտնված սրին է, և՛ գարուն բառին հոմանիշ է, և փաստացի նշանակում է ամառեկի կամ ամառեկացիների դեմ մարտնչող, այսինքն՝ ենթադրաբար ինչ-որ հեթանոս կամ բարբարոս ազգի անունն է:

Եզրակացություն

Հեղինակային նորաբանությունները լեզվաբանության մեջ կարևոր դեր են խաղում՝ ցույց տալու համար այն օրինաչափությունները, լեզվաբանական կադապարները, որոնք կիրառվել են լեզվի տվյալ ժամանակաշրջանում, ինչպես նաև ցույց տալու համար հեղինակի գիտելիքների և հմտության աստիճանը: Սանահնեցու այս մեկնության լեզվի բառային կազմը հարուստ է և՛ բնիկ, և՛ փոխառյալ կադապարներով, որոնք արտացոլում են հայոց լեզվի բառակերտման ճկունությունը: Երկի բառապաշարում վկայված են բազմաթիվ նորակազմություններ, եզրույթային արժեք ունեցող միավորներ՝ հիմնականում գոյականներ և ածականներ:

Մեր ուսումնասիրած շուրջ 60 նորաբանությունները թեև մեծավ մասամբ գործածական չեն արդի գրական հայերենում, այնուամենայնիվ դրանք հիմք են հանդիսացել բառակազմական տարբեր եղանակներով այլ բառերի ստեղծման համար: Գրաբարով ավանդված հայ մեկնողական գրականությունը, մասնավորապես Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» մեր հետազոտած երկը հարուստ աղբյուր է գրաբարյան նոր բառարանների, քերականական ուսումնասիրությունների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբաջյան, Աննա և ուրիշներ. *Հայոց լեզվի պատմություն*. ԵՊՀ հրատ., Երևան, 2017:
2. Աղայան, Էդուարդ. *Արդի հայերենի բացատրական բառարան*. «Հայաստան» հրատ., Երևան, 1976:
3. Առաքելյան, Վարազ. *Գրաբարի քերականութիւն*. «Վիամիր» հրատ., Երևան, 2010:
4. Բարսեղյան, Վարդուհի. Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկի գրաբարյան դարձվածքները. *Հայոց լեզվի պատմության հիմնահանդիսներ: Միջազգային գիտաժողովի կյուլթեր*. ԳԱԱ ԼԻ հրատ., Երևան, 2023:
5. Դիլբարյան, Նարինե. Բարսեղ Կեսարացու «Գիք Պահոցի» գրաբար բնագրի նորաբանությունները և դրանց կենսունակությունը արդի հայերենում. *Հայագիտության հարցեր*, 1 (19), ԵՊՀ հրատ., Երևան, 2020:
6. Հայր Սկրտիչ Ազգերեան և Հայր Գրիգոր Ճելալեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1865:
7. Հայր Գաբրիել Աւետիքեան և ուրիշներ. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1. Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836-1837:
8. Հովհաննիսյան, Լավրենտի. *Գրաբարի բառարան-Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*. Էդիթ Պրինտ, Երևան, 2010:
9. Մալխասյանց, Ստեփանոս. *Հայերեն բացատրական բառարան*. ՀՍՍՌ պետական հրատ., Երևան, 1944-1945:
10. Մարգարյան Ալեքսանդր, *Ժամանակակից հայոց լեզու, բառագիտություն*. ԵՊՀ հրատ., Երևան, 1993:

11. Ջահուկյան, Գևորգ. *Ժամանակակալից հայերենի բառակազմութուն և մասստաբանութուն*. ԶԽՍՐ ԳԱ հրատ, Երևան, 1989:
12. Սանահնեցի, Անանիա. *Մեկնութիւն Մատթէի Աւետարանի*. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., Էջմիածին, 2007:
13. Զոյսեյան, Զակոբ. *Ներածութուն հայ եկեղեցական մատենագրութան*. Զեդինակային հրատ. , Երևան, 2018:

WORKS CITED

1. Abajyan, Anna yev urishner. Hayots' lezvi patmut'yun, EPH hrat. [History of the Armenian Language, YSU publishing house] Yerevan, 2017. (In Armenian)
2. Aghayan, E'duard. Ardi hayereni bacatrakan bar'aran, Hayastan hrat. [Explanatory Dictionary of Modern Armenian, Hayastan ed.] Yerevan, 1976. (In Armenian)
3. Ar'ak'elyan, Varag. Grabari k'erakanut'yun, Viamir hrat. [Grabar's Grammar, Viamir] Yerevan, 2010. (In Armenian)
4. Barseghyan, Varduhi. «Anania Sanahnets'u «Meknut'yun Matt'ei Avetarani» yerki grabaryan dardzvatk'nery», Hayots' lezvi patmut'yan himnakhndirner: Mijazgayin gitazhoghovi nyut'er, GAA LI hrat. [Ancient Armenian Phraseological Units in the Book "Commentary on the Gospel of Matthew" by Anania Sanahnetsi, Issues in the History of the Armenian Language: Proceedings of the International Conference, SCI] Yerevan, 2023. (In Armenian)
5. Dilbaryan, Narine. «Barsegh Kesarats'u «Girk' Pahots'i» grabar bnagri norabanut'yunnery yev drants' kensunakut'yuny ardi hayerenum», Hayagitut'yan harts'er, EPH hrat. [“Neologisms in the Ancient Armenian Original “The Book of Fasting” by Basil the Great and their Productivity in the Modern Armenian Language”, Journal of Armenian Studies, YSU publishing house] 1 (19), Yerevan, 2020. (In Armenian)
6. Hayr Mkrtich Awgerean yev Hayr Grigor Chelalean. Ardzern bararan haykazean lezui, Tparan Srboyn Ghazaru [Handy Dictionary of the Armenian Language, Printing House in San. Lazaro], Venice, 1865. (In Armenian)
7. Hayr Gabrie'l Awetik'ean yev urishner. Nor bar'girk' haykazean lezui, Tparan Srboyn Ghazaru, [New Dictionary of the Armenian Language, Printing House in San. Lazaro], h. 1, Venice, 1836-1837. (In Armenian)
8. Hovhannisyanyan, Lavrenti. Grabari bar'ar'an - Nor haykazyan bararanum ch'vkayvats bar'er', Edit' Print, [Grabar Dictionary - Words not attested in the New Haigazian Dictionary, Edit Print, Yerevan] 2010. (In Armenian)
9. Malkhasyants', Step'anos. Hayeren bats'atrakan bararan, HSSRR hrat, [Armenian Explanatory Dictionary], Yerevan, 1944-1945. (In Armenian)
10. Margaryan, Aleksandr. Zhamanakakits' hayots' lezu, bar'agitut'yun, EPH hrat. [Modern Armenian Language.Lexicography, YSU Publishing House] Yerevan, 1993. (In Armenian)
11. Jahukyan, Gevorg. Zhamanakakakits' hayereni barakazmut'yun yev imastabanut'yun, HKSH GA hrat. [Word Formation and Semantics of Modern Armenian, ASSR Publishing House] Yerevan, 1989. (In Armenian)
12. Sanahnets'i, Anania. Meknut'yun Matt'ei Avetarani, Mayr At'or S. Ejmiatsni hrat. [Commentary on the Gospel of Matthew, Etchmiadzin Publishing House] Ejmiadzin, 2007. (In Armenian)
13. K'yoseyan, Hakob. Neratsut'yun hay yekeghets'akan matenagrut'yan. Heghinakayin hrat. [An Introduction to Armenian Christianity, Heghinakayin hratarakut'yun] Yerevan, 2018. (In Armenian)

NEOLOGISMS IN THE «COMMENTARY ON THE GOSPEL OF MATTHEW» BY ANANIA SANAHNETSI AND THEIR SEMANTIC FEATURE

VARDUHI BARSEGHYAN

*Yerevan State University,
Faculty of Armenian Philology,
Chair of History of the Armenian Language and
General Linguistics, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

The most valuable insights into the historical stages of the Armenian language, its linguistic system, and the changes and developments it underwent are provided by written manuscripts and chronicles. The linguistic level and system of the 10th-12th centuries, as well as the development and usage of Classical Armenian, can be illustrated through the works of several prominent figures of that period. To date, the language of exegetical works has been little studied, yet it provides rich information for researchers of Classical Armenian. Moreover, through the study of such works, the distinctive features of Armenian doctrinal thought and its language can be revealed.

The aim of this article is to examine the neologisms in the Classical Armenian (Grabar) work "Commentary on the Gospel of Matthew" by Anania Sanahnetsi, one of the prominent figures of the medieval period, uncovering the semantic development of these units in Modern Armenian.

During the given research, we have employed comparative, diachronic, and, to some extent, statistical methods to provide semantic explanations of the neologisms found in the text, as well as to describe their lexical characteristics. A notable result of this article is that it partially presents the high level of development and linguistic and stylistic richness of Classical Armenian in the 11th century through the vocabulary of the Commentary by Anania Sanahnetsi.

Keywords: *Anania Sanahnetsi, lexical neologism, semantic neologism, Grabar, Classical Armenian, modern Armenian vocabulary.*

НЕОЛОГИЗМЫ В «КОММЕНТАРИИ К ЕВАНГЕЛИЮ ОТ МАТФЕЯ» АНАНИИ САНАХНЕЦИ И ИХ СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ

ВАРДУИ БАРСЕГЯН

*аспирант кафедры истории армянского языка и
общей лингвистики
факультета армянской филологии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Наиболее ценные представления об исторических этапах развития армянского языка, его лексической системе, а также изменениях и развитии языка предоставляют письменные манускрипты и хроники. Лексический уровень и система языка 10-12 веков, а также развитие и использование классического армянского языка могут быть проиллюстрированы на примере произведений нескольких выдающихся фигур того времени. На сегодняшний день язык экзегетических произведений изучен мало, однако он предоставляет богатую информацию для

исследователей классического армянского языка. Более того, изучение таких произведений позволяет выявить особенности армянской доктринальной мысли и ее языка.

Целью данной статьи является исследование неологизмов в классическом армянском (грабар) языке произведения «Комментарий к Евангелию от Матфея» Анании Санахнеци - одного из выдающихся представителей армянского средневековья, с целью представить семантическое развитие этих единиц в современном армянском языке.

При подготовке статьи использовались сравнительные, диахронические и частично - статистические методы для предоставления семантических объяснений неологизмов, присутствующих в тексте, а также для описания их лексических характеристик. Одним из значимых результатов статьи является то, что она частично представляет высокий уровень развития и языковое и стилистическое богатство классического армянского языка 11 века через словарь комментария Анании Санахнеци.

Ключевые слова: *Анания Санахнеци, лексический неологизм, семантический неологизм, грабар, современный армянский лексикон.*